



*ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ և ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՀԱՎԱՍԱՐ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԴԱՇՏԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ և
ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ*

Տիգրան Օգանեզով, փորձագետ, Երևան, 19 փետրվարի 2019թ.





ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 5-ին կայացած հանդիպմանը *հավանության արժանացան «Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ապահովման 2018-2020թթ. Գործողությունների պլանի իրականացման ուղիները և միջոցները»*
Հաստատվեց ՀՀ ԷԵԲՊՆ ՋՏՊԿ նախագահի 04 օգոստոսի 2017թ N130-Ա հրամանով:
Որոշվեց իրականացնել առաջին գործողությունը՝ «Ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության (ՋՋՀՀ) ապահովելու նպատակով ջրային օրենսդրության վերլուծություն և խոչընդոտների վերինում»



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նպատակը

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովումը պատրաստելով համապարփակ իրավական վերլուծություն, որը հիմք կհանդիսանա լիազոր պետական մարմինների հետ երկխոսության և գործող օրենսդրության և պրակտիկայի բարելավման համար:

Խնդիրը

Ջրային ոլորտի օրենսդրության, մասնավորապես՝ ՀՀ Ջրային օրենսգրքի և ՀՀ Ջրի ազգային ծրագրի մասին օրենքի, խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից բացերի վերհանումը և բարեփոխումների առաջարկի ձևավորումը:

Վերլուծությունը հիմնվում է տարբեր ազգային և միջազգային կազմակերպությունների կողմից կատարված



ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքում քաղաքացիություն են մի շարք եզրույթների սահմանումները

ՀՀ ջրային օրենսգրքի հիմնական հասկացություններում սահմանել հետևյալ եզրույթները.

- *«ջրամատակարարում»,*
- *«ջրահեռացում»*
- *«ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն»,*
- *«ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովում մեկուսացված և խոցելի խմբերի համար»*



ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ ՀՀ ջրային օրենսգիրքը, չի ներառում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման մոտեցումները և չափորոշիչները:

Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման մոտեցումները պետք է ամրագրվեն ՀՀ ջրային օրենսգրքի ընդհանուր դրույթները, նպատակները, ջրի ազգային ծրագիրը, ինչպես նաև անցումային դրույթները նկարագրող հոդվածներում:



ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային օրենսդրությունը, մասնավորապես՝ ջրային օրենսգիրքը, չի սահմանում խոցելի ու մեկուսացված խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավունքները:

Խոցելի ու մեկուսացված խմբերի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավունքները պետք է ամրագրվեն ջրային հարաբերություններում տնտեսական խթանների և վճարումների համակարգը նկարագրող գլխում, ինչպես նաև ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարումը, օգտագործումը և պահպանությունը նկարագրող հոդվածում:



ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ազգային ջրային օրենսդրությունում բացակայում են խմելու ջրի մատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող չափորոշիչները:

ՀՀ ջրային օրենսգրքի անցումային դրույթներում ավելացնել խմելու ջրի մատակարարմանը և ջրահեռացմանը ներկայացվող չափորոշիչների՝ այդ թվում՝ խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության իրավական ապահովումը:



ՀԻՄՆԱԿԱՆ ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ և ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

ՀՀ ջրային օրենսգրքում բացակայում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի իրազեկումը՝ ջրային բնագավառում նախատեսվող այն գործունեության մասին, որի իրականացումը կարող է նվազեցնել վերջիններիս ՋՋՀՀ իրավունքը:

Հանրային մասնակցությունը նկարագրող հոդվածում և անցումային դրույթներում պետք է ամրագրել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի ՋՋՀՀ իրավունքը նվազեցնող ջրային բնագավառում նախատեսվող գործունեության մասին իրազեկման առանձնահատկությունները:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

✓ *Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները*

«Հասարակայնության ծանուցում» հասկացությունը շարադրել
հետևյալ կերպ՝

հասարակայնության ծանուցում՝ առաջարկվող գործունեության
ազդեցության վերաբերյալ շահագրգիռ կողմերի տեղեկացում, որը
կտպագրվի առնվազն 4000 տպաքանակ ունեցող ՀՀ պաշտոնական
տպագիր միջոցներում և էլեկտրոնային տարբերակը կտեղադրվի
համապատասխան պատասխանատու կազմակերպությունների վեբ
կայքերում՝ հատուկ առանաձնացված բաժնում:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Հոդվածը համալրել հետևյալ հասկացություններով

Ջրամատակարարում՝ մակերևութային և/կամ ստորերկրյա ջրային ռեսուրսներից անձանց անհրաժեշտ քանակի և համապատասխան որակի ջրի մատակարարման նպատակով միջոցառումների իրականացում:

Ջրահեռացում՝ անձանց գործունեությունից առաջացած կեղտաջրերը ջրային համակարգով հավաքման, տեղափոխման և/կամ մաքրման և ջրային ռեսուրս հեռացման նպատակով միջոցառումների իրականացում:

Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիություն (այսուհետև՝ ՋՋՀՀ) ջրամատակարարման և ջրահեռացման

ծառայությունների այնպիսի կազմակերպում, որը կապահովի հավասար հասանելիություն անձանց, այդ թվում ՋՋՀՀ ապահովման տեսանկյունից խոցելի և մեկուսացված խմբերում ներառված անձանց համար:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 1. Օրենսգրքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբեր սույն օրենսգրքի շրջանակներում նշված խոցելի և մեկուսացված խմբերն են այն խմբերը, որոնք բաղկացած են անհատներից, ովքեր դժվարություններ են կրում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման իրենց իրավունքներն իրացնելիս:

* (Այդ խմբերը ներառում են ջրամատակարարումից և ջրահեռացումից զուրկ բնակարանային պայմաններում, ծերանոցներում, մանկատներում ապրող, առողջապահական և կրթական հաստատություններից օգտվող, անազատության մեջ գտնվող, հատուկ ֆիզիկական կարիքներով և անօթևան մարդկանց, փախստականներին, ինչպես նաև մարդկանց, ովքեր իրենց աշխատավայրերում ապահովված չեն խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման համար սահմանված հասանելիության նորմերին):



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

Հոդված 5. Ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության հիմնական սկզբունքները

14-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝

պետական բյուջեում սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների նախատեսում՝ այդ թվում ՋՋՀՀ ապահովման համար առաջացած ֆինանսական ճեղքվածքի մարման նպատակով։



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 16. Ջրի ազգային ծրագիրը

Ջրի ազգային ծրագիրը նկարագրում է կառավարության հաստատած ջրավազանային կառավարման տարածքների՝ քառերից հետո 15-րդ կետից հետո ավելացնել նոր 16-րդ կետ՝ ջրամատակարարմանը, ջրահեռացմանը և կեղտաջրերի մաքրմանը ներկայացվող ներկա ու հետագա պահանջարկի բավարարմանը և հավասար հասանելիության ապահովմանն ուղղված միջոցառումները:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 3. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ, ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հոդված 20. Հանրային մասնակցությունը

Հոդվածի 2-րդ մասից հետո ավելացնել նոր պարբերություն՝ Եթե հասարակայնության ծանուցումը բովանդակում է այնպիսի գործունեություն, որի իրականացումը կարող է նվազեցնել խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի ՋՋՀ իրավունքը, ապա հասարակայնության ծանուցումն իրականացնող մարմինը պետք է ծանուցի վերջիններիս նրանց համար հասանելի տեղեկատվական այլ միջոցներով:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գ Լ Ո Ւ Խ 11. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԹԱՆՆԵՐԸ ԵՎ
ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՋՐԱՅԻՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Հոդված 77. Զրոգտագործման թույլտվության համար վճարները

Հոդվածի 3-րդ պարբերությունը շարադրել հետևյալ կերպ՝

Եթե ջրոգտագործումը համապատասխանում է հասարակական, այդ թվում ՋՋՀՀ ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի շահերին և սույն օրենսգրքի պահանջներին, ապա Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինն անհրաժեշտության դեպքում կարող է առաջարկել նվազեցնել ջրոգտագործման թույլտվությունների վճարները կամ տրամադրել ֆինանսական օժանդակություն՝ տնտեսական զարգացումն ու ներդրումները խթանելու, համար:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 121. Անցումային դրույթներ

Հոդվածի 5-րդ կետը համալրել նոր 52՝ ենթակետով՝ ելնելով սույն օրենսգրքի Հոդված 20-ի 3-րդ մասի պահանջներից, հաստատում է «Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի կողմից մշակված փաստաթղթերին հասարակայնության ծանուցման և հրապարակայնության կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 7 մարտի 2003 թվականի N 217-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին որոշումը»՝ մեկ տարվա ընթացքում:



ՀՀ ՋՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 17. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 121. Անցումային դրույթներ

Հոդվածի 5-րդ կետը համալրել նոր 55-րդ ենթակետով՝ սահմանում է ջրամատակարարմանը, ջրահեռացմանը և կեղտաջրերի մաքրմանը ներկայացվող չափորոշիչները՝ մեկ տարվա ընթացքում:

Հոդվածի 5-րդ կետը համալրել նոր 56-րդ ենթակետով՝ սահմանում է ՋՋՀՀ ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերի առանձնահատկությունները, այդ թվում աշխարհագրական դիրքով պայմանավորված, դրանց ջրամատակարարման և ջրահեռացման հավասար հասանելիության ապահովման նորմերը ըստ առանձնահատկությունների՝ մեկ տարվա ընթացքում:



ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված 16. Ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտի գերակա խնդիրները

Հոդվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *հավասար, հուսալի, անընդհատ և հասանելի ջրամատակարարման և ջրահեռացման ապահովումը:*

Հոդվածի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *անապահով սպառողներին և ՋՋՀՀ ապահովման տեսանկյունից մեկուսացված և խոցելի խմբերում ընդկրկված անձանց ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններից օգտվելու հավասար հնարավորության ապահովումը*

Հոդվածը համալրել նոր 19 կետով՝ *19) ջրամատակարարմանը, ջրահեռացմանը և/կամ կեղտաջրերի մաքրմանը ներկայացվող չափորոշիչների սահմանումը և ապահովումը:*



ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

Հոդված 18. Խմելու-կենցաղային ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում խնդիրները, դրանց գերակայությունը և ոլորտի զարգացման հեռանկարները

Հոդվածի 3-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
քաղաքային և գյուղական բնակավայրերում անվտանգ ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը՝ հաշվի առնելով նաև հավասար հասանելիության սկզբունքները:

Հանել Հոդվածի 3-րդ կետի 4-րդ ենթակետը:

(*ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների զարգացումն ու բարելավումը՝ հատկապես գյուղական վայրերում)



ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՋՐԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՈՒՄԸ

*Հոդված 18. Խմելու-կենցաղային ջրամատակարարման և
ջրահեռացման ոլորտում խնդիրները, դրանց
գերակայությունը և ոլորտի զարգացման հեռանկարները*

Հոդվածի 5-րդ կետը շարադրել հետևյալ կերպ՝

5. Սոցիալապես անապահով ընտանիքների և ՋՋՀՀ ապահովման տեսանկյունից խոցելի խմբերի համար ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների հավասար հասանելիության ապահովման մեխանիզմները, ինչպես նաև սուբսիդիաների կամ հարկային արտոնությունների տրամադրման տեսքով ջրային հարաբերություններում ֆինանսական օգնության տրամադրման ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:



ՋՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 5. ՋՐԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Հոդված 23. Ջրային ռեսուրսների պլանավորումը

Հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ կերպ՝
*խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման հավասար
հասանելիության ապահովումն ու մատչելիությունը:*



ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ